26.171

ՏԵԽՊՐՈՊ
ԱՄԽԿ ՀԺԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՆՈՒՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՈՒՆ ՄՏԿՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

AZƏRNƏSR

ԱԶԵՐՆԵՇՐ
1933 թ.

334.6
Ա-21

334
Ա-21

Հայերենը. խմբ. — Եղիբեկյան
Տեխ. խմբագիր — Ն. Թոռայանցյան

Հանձնված է արտադրության 19 փետրվարի 1933 թվին։
Ստորագրված է տպագրության 22 փետրվարի 1933 թվին,
Տպագրական թերթերի թիվը 1
Տպագրական նշանների թիվը—48 000

Тип. „III Интер“ Бакполиграфа БМП Баку, ул. Саратовца-Ефимова 37.
... № 1063 Ст. 364 А-3, Заказ № 638 Тираж 1000 экз.

Oa 131
Института Востоковедения Академии Наук СССР
9 MAR 2010

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է ԽՍՀՄ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԿՈՂՄԻՑ 1933 ԹՎԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-ԻՆ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Մենք, մեքենա-տրակտորային կայանը . . . . հանձին դիրեկտոր . . . . կոլխոզը, հանձին նրա նախագահի (կամ նրա տեղապահի) . . . . կնքեցինք սույն պայմանագիրը.—

1. Մեքենա-տրակտորային կայանը պարտավորվում է իր տրակտորներով, գյուղատնտեսական մեքենաներով ու գործիքներով կոլխոզում հողի մշակման ցանքի, միջշարքային մշակման, բերքը հավաքելու և կալսելու աշխատանքները կատարել այն չափերով, որ սահմանվում է ՄՏԿ-ի և կոլխոզի միջև կնքված հատուկ համաձայնության և կոլխոզի արտադրական պլանի հիման վրա։

2. Մեքենա-տրակտորային կայանը պարտավորվում է իր հաշվին տրակտորներին վառելիք և յուղելու նյութեր մատակարարել, իր հաշվին տրակտորների և մեքենաների անհրաժեշտ նորոգումը կատարել, ինչպես և վարձատրել կայանի ամբողջ գյուղատնտեսական և տեխնիկական անձնակազմին։

3. Մեքենա-տրակտորային կայանը պարտավորվում է կոլխոզին մշտական օգնություն ցույց տալ նրա կազմակերպչատնտեսական ամրապնդման գործում, դրա համար գյուղատնտեսական սպասարկում ցույց տալով կոլխոզին, նրա արտադրական-ֆինանսական պլանները կազմելով, կանոնավոր ցանքափոխություն սահմանելով, կոլխոզին աջակցելով աշխատանքը կազմակերպելու և յեկամուտները բաշխելու, կոլխոզային կադրեր պատրաստելու և հաշվառումը դնելու գործում։

4. Առանց բացառության բոլոր դաշտային աշխատանքները ինչպես և աշխատանքը տրակտորների վրա կոլխոզնիկներն իրենք են կատարում, մեքենա-տրակտորային կայանի և կոլխոզի միջև կայացած համաձայնությամբ սահմանված կարգով։ Կոլխոզը պարտավորվում է յերկաթուղու կայարաններից վառելիքն ու մեքենաները հասցնել աշխատանքի տեղը և ջուր տանել տրակտորների աշխատանքի վայրը։

5. Տնտեսության բերքատվությունն ու յեկամտաբերությունը բարձրացնելու նպատակով՝ կոլխոզը պարտավորվում է ռայգործկոմի սահմանած գյուղատնտեսական կանոնները, ինչպես և ՄՏԿ-ի պահանջով՝ բոլոր մյուս ագրոկուլտուրային անհրաժեշտ բարելավումները կիրառել և իրանց դաշտերում ռայգործկոմի հաստատած ցանքափոխությունը մտցնել։

[1-4.01.2013
26181

6. Կոլխոզը պարտավորվում է միջոցներ ձեռք առնել թե համայնացրած և թե մասամբ կոլխոզնիկների մոտ յեղած անասուններից գոյացած ամենամեծ քանակությամբ աղբային պարարտանյութեր կուտակելու, խնամքով պահել աղբն ու տանել դաշտերը՝ ՄՏԿ-ի մշակած պլանի համաձայն:

7. Խուրձերի դիզելն ու կալսելը կատարվում է վորոշ տեղերում կայանի ցուցմունքով: ՄՏԿ-ին իր կատարած աշխատանքի համար հասնող արտադրանքը յերկաթուղային կայարանները, նավամատույցները, ելեվատորները և գործարանները տանելը կատարվում է կոլխոզի միջոցներով նրա հաշվին:

8. Կոլխոզին պատկանող գյուղատնտեսական բարդ մեքենաներն ավելի արդյունավետ կերպով օգտագործելու նպատակով՝ ՄՏԿ-ն առանձին համաձայնությամբ կոլխոզից գնում է բոլոր բարդ կալսիչներն ու լոկոմոբիլները:

9. Վերացվում է վճարման այն ձևը, վորով կոլխոզները ՄՏԿ աշխատանքի համար վճարում են հաստատուն գնահատումներով և ՄՏԿ-ին իր աշխատանքի համար վճարում են սահմանված վորոշ տոկոս կոլխոզի բերքից: Վերացնելով կոլխոզի կողմից ՄՏԿ-ի աշխատանքը փողով վճարելու սիստեմը՝ սահմանվում է բնամթերքով (հացահատիկով, ճակնդեղով, բամբակով, վուշով և այլն) վճարելու սիստեմ:

10. Կոլխոզի դաշտերում մեքենա-տրակտորային կայանի կատարած բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքների համար ՄՏԿ-ն իր ծախսերի վճարման համար կոլխոզից բնամթերքով ստանում է հացահատիկի, յեգիպտացորենի, արևածաղկի, բամբակի և վուշի 20 տոկոսը, ճակնդեղի 17 տոկոսը և կարտոֆելի 16 տոկոսը:

Բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքի լրիվ ցուցակի մեջ են մտնում.—

Հացահատիկի վերաբերմամբ — կոմբայներով վարելը, ցանելը, հնձելը, կալսելը կամ հավաքելը:

Յեգիպտացորենի վերաբերմամբ — ցելը, ցանքը, կուլտիվացիան և բերքահավաքը:

Արևածաղկի վերաբերմամբ — ցելը, ցանքը, կուլտիվացիան և կալսելը:

Բամբակի վերաբերմամբ — յերկու վար, ցանքը, կուլտիվացիան և քաղը:

Ճակնդեղի վերաբերմամբ — խոր վարելը, ցանելը, կուլտիվացիան և հողից քանդելը:

Կարտոֆելի վերաբերմամբ — խոր վարելը, ցանելը և հողից քանդելը:

Վուշի վերաբերմամբ — յերկու վար, ցանքը և քծծելը:

11. Այն դեպքում, յերբ ՄՏԿ-ն կոլխոզում չի կատարում 10-րդ կետում հիշված բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքները, այլ միայն առանձին աշխատանքներ, ապա կոլխոզը ՄՏԿ-ին յուրաքանչյուր կատարած գործի համար բերքից վճարում է հետևյալ տոկոսային չափով:

ա) հացահատիկային հասկավոր կուլտուրաների վերաբերմամբ — գարնան հերկի ու ցելի համար բերքից 10%, աշնան ցելի համար — 9 տոկոս, ցանքի համար — 3%, հնձելու համար — 4%, կալսելու համար — 8%:

ՀՍՍՀ ... Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
56749-66

բ) յեգիպտացորենի վերաբերմամբ. — վարի համար — բերքից 10%, ցանքի — 3%, յուրաքանչյուր կուլտիվացիայի — 1,5%, պիկկերով բերքը հավաքելու համար — 9%:

գ) արևածաղկի վերաբերմամբ. — վարելու համար՝ բերքից 10%, ցանքի — 3%, յուրաքանչյուր կուլտիվացիայի—1,5, կալսելու — 8%:

դ) բամբակի վերաբերմամբ. —առաջին հերկի համար — բերքից 10%, յերկրորդ հերկի—7%, ցանքի — 1%, յուրաքանչյուր կուլտիվացիայի — 1%, տուրմանվակուումով հավաքելու — 8%:

յե) ճակնդեղի վերաբերմամբ. —խոր հերկի համար — բերքի 10%, ցանքի համար — 2%, յուրաքանչյուր կուլտիվացիայի —1%, հողից քանդելու համար—5%:

զ) կարտոֆելի վերաբերմամբ. —ցելի համար — բերքի 9%, ցանքի — 3%, բերքը հավաքելու համար — 6%:

է) վուշի վերաբերմամբ. — առաջին հերկի համար — բերքից 8%, յերկրորդ վարի—5%, ցանքի համար 2%, քծծելու համար — 10%:

12. Կալսելն սկսելու մոմենտին ՄՏԿ և կոլխոզը հաշվում են ՄՏԿ կատարած բոլոր աշխատանքները և վորոշում կոլխոզի ընդհանուր արտադրանքի տոկոսը, վոր ՄՏԿ-ին է հասնում նրա կատարած աշխատանքի համար բոլոր հացահատիկների, յեգիպտացորենի ու արևածաղկի վերաբերմամբ միասին վերցրած և վերոհիշյալ տեխնիկական բույսերից ամեն մեկի ու կարտոֆելի վերաբերմամբ առանձին-առանձին:

Մինչև կալսելն սկսելը ՄՏԿ-ի կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվեփակումները կատարվում են կալսած հացահատիկի առաջին պարտիաներից, բայց վոչ ուշ կալսելն սկսելուց մի ամիս հետո, իսկ կալսելու հաշիվը տեսնվում է կալսելու չափով: ՄՏԿ սպասարկած ամեն մի կոլխոզի հացահատիկների ընդհանուր հավաքումը՝ տվյալ ռայոնի համար պետական միջռայոնական հանձնաժողովի սահմանած բերքատվության հիման վրա վորոշվում է հատուկ հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. — ռայգործկոմի նախագահ կամ նախագահի տեղապահ, Աշխ. ու Պաշտ. Խորհրդի մթերման հանձնաժողովի ռայոնական լիազոր, համապատասխան ՄՏԿ դիրեկտոր և համապատասխան կոլխոզի նախագահ: Աշխատանքի համար ՄՏԿ հասանելիք հացահատիկն ու արևածաղիկը կոլխոզը հանձնում է հացահատիկային բոլոր մշակույթներով ու արևածաղկով՝ ամեն մի մշակույթի ցանքային տարածության համեմատությամբ:

Ճակնդեղի, բամբակի ու կարտոֆելի հաշիվները տեսնվում են հավաքած արտադրանքի առաջին պարտիաներից:

Վուշի հաշիվները տեսնվում են չզտած կամ զտած վուշով՝ գործարանային կամ արտագործարանային մշակման համար կոլխոզի կողմից հանձնելու նրկատմամբ սահմանված պլանի համապատասխան՝ զտած կամ չզտած վուշի առաջին պարտիաներից:

Ճակնդեղի, բամբակի, վուշի ու կարտոֆելի բերքատվությու

նը վերջանում է առանձին հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ են մտնում՝ ռայդործկոմի նախագահը կամ նախագահի տեղակալը, համապատասխան Մ. ՏԿ դիրեկտորը, համապատասխան կոլխոզի նախագահը յուր համապատասխան մթերող կազմակերպության ներկայացուցիչը:

Մյուս մշակույթների հաշիվները տեղավում են վոչ բնաբերքով, այլ փողով այն ժամկետներին ու պայմաններով, որոնց մասին առանձնապես համաձայնություն են գալիս ՄՏԿ ու կոլխոզը:

ՄՏԿ աշխատանքները ցել անելու, աշնանացանի և աշնանացելի վերաբերմամբ կատարվում են կոլխոզներին տրված անտոկոս վարկի կարգով հետևյալ տարվա բերքից բնաբերքով վճարելու պայմանով:

13· ՄՏԿ և կոլխոզը պարտավորվում են խնամքով ու հոգածությամբ վարել տրակտորների, ձիերի, գյուղատնտեսական ինվենտարի, սերմացուի և ՄՏԿ ու կոլխոզի այլ գույքի հետ, ՄՏԿ այն աշխատողների ու կոլխոզի այն անդամների վերաբերմամբ, որոնք անխուլթ կվերաբերվեն դեպի պետական ու կոլխոզային գույքը, ամենախիստ տուգանումներ նշանակել, մինչև իսկ հանել կոլխոզից, հեռացնել ՄՏԿ աշխատելուց, պատճառած վնասներն առնելով, իսկ կոլխոզի ու ՄՏԿ գույքի վերաբերմամբ չարամտորեն վարվողներին — քրեական պատասխանատվության յենթարկել հասարակական սեփականության պահպանման օրենքի համաձայն:

14· ՄՏԿ յերեք ամիսը մի անգամից վոչ պակաս իր աշխատանքի մասին հաշիվ է տալիս վարչությանը և կոլխոզնիկների ընդհանուր ժողովին: Կայանի և ՄՏԿ կից կոլխոզի միջև ամենասերտ կապակցություն հաստատելու համար կազմակերպվում է արտադրական խորհուրդ՝ կազմված ամեն մի կոլխոզի ներկայացուցիչներից: Արտադրական խորհուրդը գումարվում է հարկ յեղած դեպքում, բայց ամիսը մի անգամից վոչ պակաս:

15· Պայմանագիրն ամբողջովին կամ նրա առանձին մասերը խախտելու համար հանցավոր կողմը պատասխանատու յի մյուսի առաջ հետևյալ կարգով· — ՄՏԿ կոլխոզին հատուցանում է ՄՏԿ կողմից պայմանագիրը խախտելուց առաջացած վնասները (վատ աշխատանք· այս կամ այն պարտավորության ըստ պայմանագրի չի կատարելը և այլն) փողով՝ կոլխոզի կրած վնասների մեկ ու կես անդամով պետական սահմանված դներով և բացի դրանից ՄՏԿ դիրեկտորը դատական կամ ադմինիստրատիվ պատասխանատվության է յենթարկում: Կոլխոզը փողով հատուցանում է կոլխոզի կողմից պայմանագիրը խախտելու շնորհիվ ՄՏԿ կրած վնասները (վատ աշխատանք, գործի դուրս չգալը, վորը առաջացնում է մեքենաների պարապուրդ և արտադրական պլանը չկատարելը, մեքենաները կոտրելը և այլն) ՄՏԿ կրած վնասների մեկ ու կես անդամով պետական սահմանված դներով, իսկ յեթե կոլխոզը ՄՏԿ չի հանձնում աշխատանքի համար նրան հասանելի արտադրանքը, կոլխոզից վերցվում է ՄՏԿ հասանելի արտադրանքը անվիճելի կարգով և բացի դրանից վերցվում է դրամական տուգանք՝ պակաս հանձնած արտադրանքի արժեքի կեսի չափով՝ պետական արժեքներով:

ՄՏԿ դիրեկտոր

Կոլխոզի վարչություն

ՀԱՆՈՒՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՈՒՆ Մ. Տ. ԿԱՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

(«Պրավդա»-ի 1933 թ. փետրվարի 2-ի առաջնորդողը).

«Պրավդա»-ում հրապարակված է «Մեքենատրակտորային կայանների և կոլտնտեսությունների միջև կնքվելիք օրինակելի պայմանագիր»-ը ընդունված ԽՍՀ Միության Հողժողկոմատի կողմից և հաստատված Խ.Ս.Հ. Միության Ժողկոմխորհի կողմից: Վո՞րքան արտասովոր՝ թերևս «տարօրինակ» պետք է հնչե այդ պայմանագրի յուրաքանչյուր կետը, նրա յուրաքանչյուր տողն ամեն մի կապիտալիստական յերկրում ապրող գյուղացու ականջին:

Յեվ իրոք՝ պետությունը հանձինս մեքենայատրակտորային կայանների պարտավորվում է գյուղացիների համար կատարել բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքներն առաջնակարգ մեքենաներով, իր հաշվին տրակտորներին վառելիք և յուղանյութեր մատակարարել, իր հաշվին վերանորոգել տրակտորները և մեքենաները, գյուղացիների համար պահել և վարձատրել իր հաշվին գյուղատնտեսներին ու տեխնիկներին: Պետությունը՝ հանձինս մեքենայատրակտորային կայանների, բացի դրանից պարտավորվում է գյուղացիներին մշտական օգնություն հասցնել կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման գործում, արտադրական-ֆինանսական պլաններ կազմելում, տնտեսությունը ճիշտ, ագրոնոմիական գիտությունների պահանջներին համապատասխան (ագրոտեխնիկա, ցանքաշրջանառություն) կերպով վարելու գործում: Պետությունը պարտավորվում է օգնել կոլեկտիվ աշխատանքի կազմակերպմանը, հաշվառքի դրմանը, գյուղացի-կոլխոզնիկներին խոշոր տնտեսություն վարել սովորեցնելը:

Մինչև հեղափոխությունն աշխատավոր գյուղացին յերազում անգամ չեր կարող պատկերացնել, վոր յերբևիցե կարող է հանդես գալ մի այնպիսի պետություն, վորը հանկարծ գար՝ իր մեջքը կալվածատիրոջ ու կուլակի համար կատարվող ստրկական աշխատանքի տակ հավիտյան խոնարհած, անյերևակայելի տանջանքների մեջ հազիվ-հազ իր համար մի կտոր ցամաք հաց ձեռք բերող գյուղացու մոտ և ասեր — «Ահա քեզ տրակտոր, ահա քեզ ժամանակակից տեխնիկայով ամենալավ մեքենաները, ահա քեզ օգնող գյուղատընտես և տեխնիկ, աշխատիր և ապրիր այնպես, ինչպես վայել է մարդուն»:

Բանվոր դասակարգը՝ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ վերցնելով իշխանությունն իր ձեռքը, կառուցեց այնպիսի մի պետություն, վորն արդեն պրակտիկայում ապացուցեց, թե ինքը վոչ միայն պատրաստ է, այլ և ի վիճակի յե հսկայական արտադրական և ամեն տեսակի օգնություն ցույց տալ աշխատավոր գյուղացիությանը:

Վերջերս «Պրավդա»-ում իրենց նամակը հրապարակած Բեզենչուկի գյուղացիները, վորոնց կեսից ավելին, վոչ այնքան հեռու անցյալում, այս կամ այն չափով կախված են յեղել կուլակից, նրա «գթությունից», վորոնք իրենց լեզվով ասած «փորփրել են հողը անպետք դութանիկներով ու փոխ ձիերով, հավաքել են բերքը մանգաղով ու գերանդիով, կալսել են կամներով կամ շղթաներով» — այժմ, կոլխոզներում ՄՏԿ-ների օգնության շնորհիվ, իրենց տրամադրության տակ ունեն հետևյալ առաջնակարգ մեքենաների պարկը՝ 50 տրակտոր, բազմաթիվ գութաններ, սկավառակներ, բազմաշարք ցանիչներ, կուլտիվատորներ, խուրձակապեր, 6 կոմբայն, 22 բարդ կալսիչներ, 4 բեռնատար ավտոմոբիլներ: Յեվ այս բոլորն ստացել են նրանք ընդամենը 2 տարվա ընթացքում: Իսկ ինչպիսի հեռանկարներ են բացվում հետագայի համար, յեթե հաշվի առնենք, վոր բանվորներն օրեցօր ավելի ու ավելի են յուրացնում տրակտորների, կոմբայների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, ավելի ու ավելի են տիրապետում մեքենայականացման այն համաշխարհային գիգանտներին, վորոնք կառուցվել են առաջին հնգամյակում:

Բանվորա-գյուղացիական պետությունը վերցնելով իր վրա գյուղացիներին օգնելու խնդիրը, ազնվորեն կատարում է իր պարտականությունները: Նա վոչ միայն տրակտորներ ու մեքենաներ է տրամադրում կոլտնտեսություններին, այլ յեվ ՄՏ Կայանները կազմակերպելով՝ նա հսկում է, թե ի՞նչպես են աշխատում ՄՏ Կայանները, և ձգտում է այն բանին, վորպեսզի նրանց կատարած աշխատանքը բարեխիղճ լինի: Կարո՞ղ է արդյոք սոցիալիզմ կառուցող պրոլետարական պետությունը չահագրգռված լինել նրանով, վոր ծածկի ՄՏ Կայանների աշխատանքի թերությունները, քողարկի նրանց սխալները, ների այն անփութությունները, վոր վորևէ ՄՏ Կայան թույլ է տալիս կոլտնտեսությունների նկատմամբ:

Վո՛չ, չի կարող: Կուսակցությունն ու կառավարությունն անողոք ինքնաքննադատության են յենթարկում ՄՏ Կայանի աշխատանքներում յեղած յուրաքանչյուր սխալը, ամեն կերպ ձգտելով բարելավել նրանց աշխատանքը: Վերցրեք ԽՍՀ Միության Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի վորոշումները՝ կոլտնտեսությունների ամրացման վերաբերյալ: Այդ բանաձևի 5-րդ կետն ամբողջովին նվիրված է ՄՏԿայանների աշխատանքի թերությունների քննադատությանը: Թերությունները նշելու հետ միաժամանակ, բանաձևի այն մասում, ուր խոսվում է տրակտորների ու մեքենաների օգտագործման մասին, ուղղակի ասված է — «Ագրոնոմիական գծով կոլտնտեսություններին սպասարկելու գործը չատ ՄՏ Կայաններում միանգամայն անբավարար ձևով է կազմա-

կերպված, և բացակայում է հարկ չեղած աշխատանքը՝ ՄՏ Կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսական դաշտերի բերքատվությունը բարձրացնելու ասպարիզում:

Բանվորա-գյուղացիական կառավարության բարձրագույն որգանը հատուկ ուշադրություն դարձրեց այն հանգամանքի վըրա, վոր ՄՏԿայանները, ստանալով կոլտնտեսություններից իրենց կատարած աշխատանքի վարձատրությունը սահմանված կայուն դրույքներով՝ անկախ կատարված աշխատանքի վերջնական արդյունքներից՝ բավարար չափով շահագրգռված չեն լինում վորակական ցուցանիշները պահպանելու և կոլտնտեսական դաշտերի բերքատվությունը բարձրացնելու խնդրում: Լավ թե վատ վարել ու ցանել են տրակտորիստները, բուսե՞լ է, արդյոք, թե չի բուսել վորևէ բան այդ հողամասում—ՄՏԿ-ի դիրեկտորը կարող է չհանգստանալ, միևնույն է, տրակտորի աշխատանքի արժեքը լրիվին վճարվելու յե: Կալսում է կոլխոզը Մ. Տ. Կ.-ի բարդ կալսիչով թե վոչ — դիրեկտորը քիչ հոգ է տանում այդ մասին. վո՞րքան է կալսել, վո՞րքան հատիկ մնացել դարմանի մեջ, վորքա՞ն է մնացել մղեղում, — նա միևնույն է, ստանալու յե իրեն հասանելիքը:

Կենտրոնական Գործ. Կոմիտեն չեղյալ հայտարարեց ՄՏԿայանների աշխատանքի վարձատրման այդ նախկին կարգը և սահմանեց այն նոր կարգը, վորին այժմ մանրամասնորեն մըշակված է «ՄՏԿայանների և կոլտնտեսությունների միջև կնքվող օրինակելի պայմանագրում»:

Այսուհետև ՄՏԿայանները հիմնական կուլտուրաների մշակման ասպարիզում իրենց կատարած աշխատանքի համար կոլտնտեսություններից ստանալու յեն բերքի վորոշ մասը՝ մթերքով: Յեթե ավելի լավ և ժամանակին տրակտորներով վարված ու ցանված կլինի կոլտնտեսական դաշտը՝ ավելի շատ բերք կստացվի, հետևապես ստացված բերքի մեջ ավելի շատ կլինի ՄՏԿայանի բաժինը: Իսկ յեթե աշխատանքը վատորակ կլինի կատարված և վոչ իր ժամանակին՝ վատ բերք կստացվի, այդ դեպքում ՄՏԿայանը վոչ միայն համապատասխան չափով պակաս մթերք կըստանա, այլ և նա պետք է հատուցի կոլտնտեսությանը՝ պայմանագիրը խախտելու հետևանքով նրան հասցված վնասը՝ այդ վընասի մեկ և կես չափով (սահմանված պետական գներով), և բացի այդ՝ ՄՏԿայանի դիրեկտորը դատի կտրվի կամ վարչական տույժի կենթարկվի:

Ահա թե ինչպիսի լրջությամբ է վերաբերվում պետությունը դեպի այն պարտավորությունները, վոր նա ստանձել է կոլտնտեսական գյուղացու հանդեպ: Ահա թե բանվոր դասակարգն ու Կոմունիստական կուսակցությունն ինչպիսի խստությամբ պատասխանատվություն են պահանջում յուրաքանչյուր կազմակերպությունից, իր յուրաքանչյուր ներկայացուցիչից, վորոնց հանձնարարված է կոլտնտեսությունները ամրացնելու պետական աշխատանքը, կոլտնտեսություններին օգնություն ցույց տալու պետական գործը:

Յեվ յուրաքանչյուր ազնիվ, բարեխիղճ կոլտնտեսական չի կարող չգնահատել կուսակցության ու կառավարության այս

հոգատարությունը՝ աշխատավոր գյուղացիների նկատմամբ՝ նրանց կյանքի պայմանները բարելավելու և նրանց յեկամուտը բարձրացնելու ասպարիզում:

Նա պետք է հիշի, վոր այն իշխանությունը, վորը վերջապես գյուղացուն հնարավորություն է տվել ապրել և աշխատել մարդավայել կերպով, վոր այդ իշխանությունն իրավունք ունի պահանջել, վորպեսզի գյուղացիները ևս իրենց պարտավորությունները ճշգրիտ կատարեն, և ինքը գյուղացին ակտիվ պայքարի այդ բանի համար:

Մի 2–3 տարվա ընթացքում Խորհրդային իշխանությունը հարյուր հիսուն հազար տրակտոր, հազարավոր կոմբայններ ու ավտոմոբիլներ է տվել կոլտնտեսական գյուղացուն: Ու՞մն են այդ մեքենաները: Գուցե դա պարոն կապիտալիստներն ու կալվածատերե՞րն են շնորհել: Պարոնայք կապիտալիստներն ու կալվածատերերը հարյուրավոր տարիներ կանգնած եյին իշխանության գլուխ, իսկ գյուղացին ինչպես վոր ապրում եր ստրկության ու աղքատության մեջ, այնպես ել շարունակում եր ապրել: Նա մինչև այժմ ել եր արյուն-քրտինքով կողողեր հողը, նրա յերեխաները մինչև այժմ ել կթափառեյին յերկրե-յերկիր, յեթե չլիներ Հոկտեմբերյան հեղափոխությունը, յեթե իշխանության գլուխ չկանգնեյին բանվոր դասակարգն ու Կոմունիստական կուսակցությունը:

Հապա ի՞նչպես պետք է այս ամենից հետո յուրաքանչյուր գյուղացի, վորն իր կաշու վրա փորձել է ստորացուցիչ ստրկական աշխատանքի այդ բոլոր «հրաշալիքները» — նա ի՞նչպես պետք է վարվի նրանց հետ, ովքեր այսօր նրա ականջին փսփսում են, թե՝ «դուրս մի գա աշխատանքի», «փչացրու տրակտորը», «թաքցրու հացը պետությունից», «սերմացուն մի հանձնիր»: Գուցե այդ մարդիկ հետո նրան ավելի շա՞տ տրակտորներ ու ավելի լա՞վ վորակի մեքենաներ կտան, քան բանվորա-գյուղացիական պետությունն է տալիս: Գուցե նրանք՝ այդ մարդիկ՝ ընդհանրապես բարությու՞ն են ցանկանում անել գյուղացուն՝ այդպիսի խորհուրդներ տալով: Գուցե ճի՞շտ չէ այն, վոր միայն մեկ հեկտար վարելու համար առաջ կուլակը չքավորից պոկում եր 30–35 ռուբլի՝ այսինքն՝ բերքի կեսից մինչև յերեք քառորդը, իսկ այժմ առաջնակարգ մեքենաներով կատարվող բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքների համար (այսինքն — վար, ցանք, հունձ, բերքը հավաքելն ու կալսելը) կոլտնտեսությունը պետությանը վճարում է ընդամենը բերքի մեկ հինգերորդական մասը:

Թող յուրաքանչյուր գյուղացի ինքն իրեն այդպիսի հարց տա, և այդ ժամանակ կլինի, վոր նրա հիշողության մեջ վերակենդանանան անցյալի սոսկալի պատկերները, վորպեսզի յեռան և այդ բշխշողների վրա թափվեն դարերով կուտակված ատելությունն ու ցասկոտ կատաղությունը դեպի ժողովրդի այդ ծծողները: Վոչ մի ներողամտություն դեպի ժողովրդի թշնամիները, վորոնք այսօր բարեկամության դիմակի տակ ուզում են փչել բանվորների ու գյուղացիների դաշինքը:

Վոչ մի դեպքում չպետք խնա-

յել ժողովրդի թշնամիներին, վորոնք այսօր իրենց՝ խեղդողի ու դահիճի՝ դրվելի, վնասարար ձեռքը մեկնում են ժողովրդական գույքին, պետական տրակտորներին ու կոլտնտեսական բարիքին:

Վո՛չ մի դեպքում չպետի խնայել ժողովրդի թշնամիներին ու նրանց գործակիցներին, վորոնք սաբոտաժ են կազմակերպում պետության հանդեպ՝ իրենց պարտավորությունները կատարելու գործում:

ՄՏԿայանների և կոլտնտեսությունների որինակելի պայմանագիրը, վորով պետությունը հսկայական պարտավորություններ է վերցնում իր վրա՝ կոլտնտեսականների հանդեպ՝ նախատեսում է նաև կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների պարտավորությունները՝ պետության հանդեպ: Ցեվ այնպես, ինչպես ՄՏԿայանը պայմանագիրը խախտելու դեպքում պատասխանատվություն է կրում դրա հետևանքով կոլտնտեսության հասցրած վնասի համար, այնպես էլ պետք է պատասխանատվություն կրի այն կոլտնտեսությունը, վորը չի կատարի իր պարտականությունները պետության հանդեպ:

«Կոլխոզը հատուցում է ՄՏԿ-ին՝ նրան հասցրած վնասները, վոր տեղի են ունենում պայմանագիրը կոլխոզի կողմից խախտելուց (վատ աշխատանք, աշխատանքի դուրս չգալը, վոր պատճառ է դառնում մեքենաների պարապուրդին և արտադրական պլանի չկատարմանը, մեքենաների կորելը և այլն) դրամով՝ ՄՏԿ-ին հասցրած վնասների մեկ ու կես չափով սահմանած պետական գներով, իսկ կոլխոզի կողմից մեքենա-տրակտորային կայանին հանձնելիք արտադրանքը չտալու դեպքում, կոլխոզից առնվում է անվիճելի կերպով և բացի այդ դրամական տուգանք՝ չհանձնած արտադրանքի կեսի չափի՝ պետական գներով հաշված»:

Պետությունը պարտադիր կերպով հացահատիկ հանձնելու օրենքից հետո, հրապարակելով ՄՏԿայանների և կոլտնտեսությունների որինակելի պայմանագիրը, բանվորա-գյուղացիական պետությունը դրանով իսկ տալիս է մի նոր, խոշորագույն կարևորություն ունեցող ապացույց այն մասին, վոր նա իրոք հոգ է տանում կոլտնտեսությունների ամրացման ու կոլտնտեսականների յեկամուտը բարձրացնելու մասին:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի, յուրաքանչյուր ազնիվ գյուղացու խնդիրն է՝ տասնապատկել իր յեռանդը բոլոր տեսակի կուլակային տարրերի դեմ մղվող պայքարում, վորոնք ձգտում են քայքայել կոլտնտեսությունները և վնասարարությամբ են զբաղվում կոլտնտեսություններում ու ՄՏԿայաններում, սաբոտաժ են կազմակերպում գյուղացիների կողմից պետության հանդեպ իրենց պարտավորությունները կատարելու գործում:

Մեր ուժը, նոր կոլտնտեսական կարգերի ուժը՝ բանվորների ու գյուղացիների անխորտակելի դաշինքի մեջն է: Առանց ձեռքները ծալելու, մենք կաշխատենք այդ դաշինքն ամրապնդելու համար, վողջ ժողովրդական տնտեսության հետագա վերելքի ու սոցիալիստական վերակառուցման համար, բերքատվությունը բարձրացնելու համար:

ՄՏԿ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1933 Թ, ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Խոշոր տնտեսա-քաղաքական նշանակություն տալով ՄՏԿ-ի և կոլխոզների միջև կնքվող պայմանագրերի հաջող անցկացման՝ ԱՍԽՀ-ի Ժողկոմխորհը վորոշում է.—

1. ԽՍՀՄ Հողժողկոմատի կողմից ընդունված (հաստատված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1933 թ. փետրվարի 5-ին) ՄՏԿ-ների և կոլխոզների միջև կնքելիք որինակելի նոր պայմանագրի հաստատումից հետո վերացնել ՄՏԿ և կոլխոզների միջև գոյություն ունեցող պայմանագրային պարտականությունների ներկա սիստեմը:

2. Փոխելով ՄՏԿ-ի աշխատանքների հանդեպ կոլխոզների կողմից տրվող հատուցումն գնահատումներով վճարման սիստեմը՝ սահմանել ՄՏԿ-ին կոլխոզի բերքից վորոշ տոկոսային վճարման կարգը:

3. ԱՍԽՀ Հողժողկոմատի կողմից հաստատված ընդհանուր պայմանագիրը, վորը մշակված է որինակելի պայմանագրի հիման վրա՝ հաստատել:

4. Առաջարկել ԱՍԽՀ Հողժողկոմատին ու Ազխլտրակտորոցենտրին մի դեկադի ընթացքում մշակել և ներկայացնել ԱՍԽՀ Ժողկոմխորհին հաստատելու՝

ա) Այն կուլտուրաների ցուցակը, վորոնց բերքից ՄՏԿ իրենց աշխատանքի համար ստանում են կոլխոզներից բնամթերքով:

բ) Յուրաքանչյուր ՄՏԿ-ին նրա աշխատանքի տեսակի հանդեպ հասանելիք բնամթերքի տոկոսային չափը, յուրաքանչյուր մշակույթի նկատմամբ առանձին վերցրած, բացի այն մշակույթների աշխատանքի վճարումից, վորոնք ԽՍՀՄ Հողժողկոմատի կողմից նախատեսված և հաստատված են որինակելի պայմանագրում:

գ) ՄՏԿ-ի կողմից կատարած աշխատանքի յուրաքանչյուր տեսակի դրամական վճարման քանակն այն մշակույթների նկատմամբ, վորոնց բերքից ՄՏԿ-ին բնամթերքով չի տրվելու նրանց աշխատանքի համար:

5. Հանձնարարել ռայգործկոմներին, ՄՏԿ-ի դիրեկտորներին, քաղբաժինների հետ միասին մինչև այս տարվա փետրվարի 20ը ծավալել ՄՏԿ-ի աշխատակիցների, արտադրական խորհուրդների, կոլխոզային ակտիվի և այլ միջև որինակելի պայմանագրի ուսումնասիրումը:

Փետրվարի 20-ից մինչև մարտի 10-ն անցկացնել պայմանագրերի կնքման կամպանիան, ծավալելով նոր պայմանագրերի

շուրջը լայն բացատրական աշխատանք, դարձնելով պայմանագիրը յուրաքանչյուր կոլխոզնիկի սեփականություն։

6. ԱՍԽՀ Հողժողկոմատը պետի ապահովի օրինակելի պայմանագրի հրատարակումը 2 օրվա ընթացքում՝ թուրքերեն-ռուսերեն և հայերեն-ռուսերեն լեզուներով, պլակատների և բրոշյուրների ձևով, միացնելով նրանց և «Պրավդա»-ի 1933 թվի փետրվարի 3-ի առաջնորդողը։

ԱՍԽՀ Ժողկոմխորհի
նախագահ՝ ԲԱԳԻՐՈՎ.

ԱՍԽՀ Հողժողկոմ՝
ՎԵԶԻՐՈՎ.

ԱՍԽՀ Հողժողկոմի
տեղակալ՝ ՊԻՉԱԽՉԻ

ՊԵՏ. ԿԱՆ Գր. ՊԱԼԱՏ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0208181

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ЗА УКРЕПЛЕНИЕ МТС И КОЛХОЗ

за

ПОВЫШЕНИЕ УРОЖАЙНОСТИ

АЗЕРНЕШР